ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Արմեն Դանիելյան - Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար

2. Գործուղման վայրը, ժամկետները.

Սերբիայի Հանրապետություն (ք. Բելգրադ), 2025 թվականի ապրիլի 1-ին

3. Հրավիրող կողմը.

Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպություն (ԿԱՀԿ)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Խոզերի աֆրիկյան ժանտախտի վերահսկում. տեսությունից մինչև պրակտիկա» թեմայով մեկնարկային հանդիպմանը մասնակցելու նպատակով

5. Քննարկված թեմաները.

Քննարկվել են խոզերի աֆրիկյան ժանտախտի դեմ պայքարի և կանխարգելման տարբեր երկրների փորձը, ուշադրության դարձնելով այն հանգամանքին, որ ներկայումս հիվանդությունը ոչ միայն խոչընդոտում է կենդանիների առողջությանը և բարեկեցությանը, այլև վնասակար ազդեցություն է ունենում կենսաբազմազանության և անասնապահության վրա աշխարհի մի քանի տարածաշրջաններում: Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության ներկայացուցիչները փաստեցին, որ իրենք աշխատում են անդամ պետությունների իրենց գործընկերների, արդյունաբերողների և տարբեր փորձագետների հետ՝ աջակցելու երկրներին խոզերի տվյալ հիվանդությունից կանխելու և վերահսկելու իրենց ջանքերում, և քանի որ հիվանդության արձանագրման ժամանակ տեղի է ունենում խոզերի պոպուլյացիաների զանգվածային կորուստներ և դրա հետևանքով աշխարհում առաջանում է տնտեսական

մեծ խնդիրներ, որոնք էլ կարող են հանգեցնել մինչև խոզի մսի արտադրության ճգնաժամային իրավիճակին:

6. Հանդիպումները, ելույթները, բարձարցված կամ քննարկված հարցերը.

Հանդիպմանը մասնակցող երկրներից՝ Իտալիայի Հանրապետության լիազոր մարմնի ներկայացուցիչները ներկայացրել են խոզերի աֆրիկյան ժանտախտի դեմ պայքարի և կանխարգելման իրենց երկրի փորձը: Հանդիպման մասնակիցները նաև նախաձեռնությամբ են հանդես եկել, որպեսզի մասնակից պետություններից ձևավորվի խոզերի աֆրիկյան ժանտախտի դեմ պայքարի և կանխարգելման աշխատանքային խումբ, որում ներառված կլինեն Վրաստանի, Ղազախստանի, Սերբիայի, Մակեդոնիայի և Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինների ներկայացուցիչները: Խմբում ներառված կլինեն նաև Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության փորձագետները: Նախատեսվում է, որ նշված խումբը հետագայում կմշակի հիվանդության դեմ պայքարի և կանխարգելման համապատասխան պլան:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ տվյալ աշխատանքային խումբը կգործի Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության կանոնադրության ներքո՝ մինչև 2027 թվականի հուլիսը, և խումբը կնախագահեն խմբի անդամ երկրները՝ ռոտացիոն սկզբունքով, կես տարի ժամկետով, առցանց ձևաչափով, հնարավորության դեպքում նաև առկա ձևաչափով, որի արդյունքում տվյալ աշխատանքային խումբը յուրաքանչյուր անդամ երկրի համար կմշակի հիվանդության դեմ պայքարի և կանխարգելման պլան:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները, եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

9. Ստորագրությունը, ամսաթիվը. 04 ապրիլի 2025թ.